ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Արդարադատության նախարարի տեղակալ Գևորգ Քոչարյանի՝ Լիտվայի Հանրապետություն (Վիլնյուս) գործուղման արդյունքների վերաբերյալ

Գործուղված պաշտոնատար անձ՝ Գևորգ Քոչարյան

Գործուղված անձի զբաղեցրած պաշտոնը՝ Արդարադատության նախարարի տեղակալ

Գործուղման վայրը և ժամկետները՝ Լիտվայի Հանրապետություն (Վիլնյուս), 2026 թվականի ապրիլի 20-ից 23-ը:

Հրավիրող կողմը՝ ՏՀԶԿ Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի հակակոռուպցիոն ցանցի (այսուհետ՝ Հակակոռուպցիոն ցանց) քարտուղարություն:

Գործուղման նպատակը՝ մասնակցություն Հակակոռուպցիոն ցանցի քարտուղարության կողմից կազմակերպվող Հակակոռուպցիոն առաջնորդների ռազմավարական երկխոսությանը:

Քննարկված թեմաները՝ տարածաշրջանում հակակոռուպցիոն բարեփոխումների իրականացման առաջընթաց և առկա մարտահրավերներ, Հակակոռուպցիոն ցանցի 2023-2026 թվականների աշխատանքային ծրագրի իրականացման արդյունքներ, Հակակոռուպցիոն ցանցի 2027-2030 թվականների աշխատանքային ծրագրի հնարավոր ռազմավարական ուղղություններ:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Գևորգ Քոչարյանը մասնակցել է 2026 թվականի ապրիլի 20-ից 23-ը տեղի ունեցած Հակակոռուպցիոն ցանցի քարտուղարության կողմից կազմակերպվող Հակակոռուպցիոն առաջնորդների ռազմավարական երկխոսությանը: Հակակոռուպցիոն ցանցի Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի (IAP) շրջանակում մոնիթորինգի ենթակա երկրների ներկայացուցիչները ներկայացրել են հակակոռուպցիոն ոլորտի իրենց առաջնահերթությունները և կարիքները, ինչպես նաև քննարկումների արդյունքում նախանշել Հակակոռուպցիոն ցանցի ռազմավարական հետագա ուղղությունները և ձևավորել 2027-2030 թվականների աշխատանքային ծրագրի հնարավոր կետերը:

Գևորգ Քոչարյանը Ռազմավարական երկխոսությանը ներկայացրել է Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ոլորտի վերջին բարեփոխումները ՏՀԶԿ Հակակոռուպցիոն ցանցի Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի մոնիթորինգի հինգերորդ փուլի շրջանակում և Հայաստանի Հանրապետության առաջընթացը՝ 2025 թվականի սեպտեմբերին հրապարակված ՏՀԶԿ հակակոռուպցիոն մոնիթորինգի հինգերորդ փուլի Հայաստանի առաջընթացի զեկույցում տեղ գտած կատարողականի մակարդակի գնահատումից ի վեր:

Ռազմավարական երկխոսության երկրորդ օրը՝ Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի մոնիթորինգի վեցերորդ փուլի ռազմավարական նախնական ուղղությունները նախանշելիս, Գևորգ Քոչարյանը հանդես է եկել ելույթով և ընդգծել քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներգրավվածության կարևորությունը միջազգային մոնիթորինգային գործընթացներում: Գևորգ Քոչարյանը ներկայացրել է հակակոռուպցիոն ոլորտի բարեփոխումների գործընթացում ՔՀԿ ներգրավվածության հայաստանյան փորձը և վերջիններիս ակտիվ մասնակցությունը՝ հակակոռուպցիոն ոլորտում իրականացվող միջոցառումների վերաբերյալ իրազեկման արշավների միջոցով հանրության շրջանում իրազեկվածության մակարդակի բարձրացման գործում:

Գևորգ Քոչարյանը հանդիպում է ունեցել ՏՀԶԿ Ձեռնարկատիրության և ֆինանսական հարցերով տնօրինության Կոռուպցիայի դեմ պայքարի բաժնի ղեկավարի և Հակակոռուպցիոն ցանցի քարտուղարության հետ: Հանդիպման ընթացքում Գևորգ Քոչարյանը ներկայացրել է նոր՝ Արդարադատության ոլորտի բարեփոխումների ռազմավարության տեսլականը, հակակոռուպցիոն ոլորտում Արդարադատության նախարարության կողմից վերհանված կարիքները և միջազգային հակակոռուպցիոն հանձնառությունների շրջանակում կատարման ենթակա միջոցառումները:

Հակակոռուպցիոն ցանցի քարտուղարության հետ քննարկվել է նոր ռազմավարության մշակման աշխատանքների, ինչպես նաև ռազմավարությունից և միջազգային հանձնառություններից բխող հետագա օրենսդրական փոփոխությունների շրջանակներում

ՏՀՀԿ Հակակոռուպցիոն ցանցի կողմից Հայաստանի Հանրապետությանը տեխնիկական աջակցության տրամադրման հնարավորությունը:

Արդարադատության նախարարի տեղակալ՝

4/29/2026

X

ԳԵՎՈՐԳ ՔՈՉԱՐՅԱՆ

Signed by: KOCHARYAN GEVORG 2711840247

Գևորգ Քոչարյան

29.04.2025թ.